ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թ.-ի հունիլսի 13-ից 14-ը Վրաստան

(ք. Բաթումի) կատարած գործուղման արդյունքների մասին

Անուն, ազգանունը՝

Սոնա Հարությունյան

Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղար

Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան՝ Բաթումի, հուլիսի 13-ից 14-ը:

Հրավիրող կողմը.

Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«ԵՄ-ն էներգիայի համար» - «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել ԶԼՄ-ներում էներգետիկ խնդիրների լուսաբանման վերաբերյալ դասընթաց, որի նպատակն էր բարձրացնել լրատվամիջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակության հետ կապերի աշխատակիցների, մամուլի խոսնակների գիտելիքների և հմտությունների մակարդակը հատկապես էներգետիկայի բնագավառում, որպեսզի ոլորտին վերաբերող տարբեր ռեֆորմները, նորությունները, որոշումները սխալ չմեկնաբանվեն:

Քննարկված թեմաները.

- Ճգնաժամային իրավիճակներում արդյունավետ հաղորդակցություն, հաղորդակցության ռազմավարության մշակում
- Էներգետիկ թեմաների լուսաբանումը ԶԼՄ-ներում
- Ինչպես իրականացնել արդյունավետ հաղորդակցություն էներգետիկ ռեֆորմների ժամանակ
- Խոցելի սպառողներ - պետական քաղաքականության և ընկերությունների շահերի հավասարակշռում
- Վերականգնվող աղբյուրների կիրառմաբ էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը էներգահամակարգում և դրա դրական ազդեցությունը խոցելի սպառողների վրա։

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ժամանակ մասնակցել եմ քննարկումներին, ինչպես նաև կազմակերպված երկու սիմուլիացիոն խաղերին։ Խաղի միջոցով ստեղծվել է իրավիճակ՝ մեծ ռեգիոնում տեղի էր ունեցել խոշոր վթար և ամբողջ ռեգիոնը մի քանի օր շարունակ զրկված էր էլեկտրաէներգիայից։ Անհրաժեշտ էր այդ ճգնաժամային իրավիճակում իրականացնել ճիշտ հաղորդակցություն թե ԶԼՄ-ների, և թե պետական տարբեր գերատեսչությունների հետ՝ փորձելով մեղմել հանրության շրջանում առաջացած բողոքի ալիքը և արագ լուծում տալ խնդրին։
Երկրորդ սիմուլիացիոն խաղը վերաբերում է էնեկտրաէներգիայի սակագնի բարձրացմանը։ Առաջադրանքն էր՝ օբյեկտիվորեն բացատրել սակագնի բարձրացման պատճառները և այն հանրամատչելի ներկայացնել թե ԶԼՄ-ներին, և թե հանրությանը։

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ և ստորագրված փաստաթղթեր առկա չեն։

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ստորագրությունը, ամսաթիվը:

19.07.2023թ.: